Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում եվ մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդների խումբ

Առաջարկություններ

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգում իրավիճակի բարելավման նպատակով 2018-2038 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2018-2038 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Երևան
2017

Բովանդակություն

Ներածություն 4

Միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայի համաձայն ՀՀ քրեակատարողական օրենսդրության շարունակական արդիականացում 6

Պատիժը կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձանց որոշումների, գործողության և անգործության դեմ ներկայացված բողոքների քննության մեխանիզմի կատարելագործում 7

Քրեակատարողական հիմնարկների օպտիմալացում, արդիականացում 8

Քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայության արդիականացում 9

Քրեակատարողական ծառայության արդիականացում, մասնագիտական ներուժի շարունակական զարգացում և արդյունավետ տեղաբաշխում 10

Անազատության մեջ գտնվող անձանց զբաղվածության ապահովման պայմանների ստեղծում 11

Քրեակատարողական ծառայողների սոցիալական պայմանների բարելավում 12

«Քրեակատարողական գործ» մասնագիտության ուսումնառության կազմակերպում 13

Անչափահասների գործերով արդարադատության խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացում, անչափահաս դատապարտյալների պահման պայմանների բարելավում 14

Քրեակատարողական ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված ծրագրի մշակում և իրականացում 15

Քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող հաշմանդամություն ունեցող անձանց համար համապատասխան պայմանների ապահովմանն ուղղված չափանիշների մշակում և ներդնում 16

Հավելյալ միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ 17

2017 թ. օգոստոսի 24-ին ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկման է դրվել «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգում իրավիճակի բարելավման նպատակով 2018-2038 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2018-2038 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ)։

Ստորև ներկայացված առաջարկությունները մշակվել են «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի կողմից։

Ներածություն

Նախագծի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգում իրավիճակի բարելավման, ինչպես նաև ոլորտի շարունակական զարգացման համար կոնկրետ միջոցառումների իրականացումը[1]:

Նախագծով սահմանված միջոցառումների իրականացմանն ուղղված գործողությունների հիմնական բովանդակային մասը պարունակում է միջազգային փորձի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա քրեակատարողական համակարգում առկա խնդիրների հնարավոր լուծումներ:

Նախագծի հեղինակը բավականին հստակ ձևակերպում է տվել քրեակատարողական համակարգում իրականացվող միջոցառումների նպատակին և ակնկալվոր արդյունքին՝ զարգացած քրեակատարողական համակարգ և դրա համապատասխանեցումը միջազգային չափանիշներին: Միջազգային փորձը, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (այսուհետ՝ ԽԿԿ) պատվիրակության, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի (այսուհետ՝ Դիտորդական խումբ) տարեկան զեկույցները, ինչպես նաև տվյալ ոլորտում գործող միջազգային իրավական կարգավորումները ելակետային նշանակություն կարող են ունենալ խնդիրների վերաբերյալ ճիշտ համակարգային մոտեցում ձևակերպելու համար:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգում իրավիճակի բարելավման նպատակով 2018-2038 թվականների ռազմավարությամբ (այսուհետ՝ Ռազմավարություն) սահմանված միջոցառումների արդյունավետ իրականացման և մշտադիտարկման համար անհրաժեշտ է որակական և քանակական գնահատական տալ նախատեսվող գործողություններին:

Ռազմավարական պլանների մշակման վերաբերյալ միջազգային չափորոշիչների համաձայն՝ գործողությունները պետք է սահմանեն ծրագրի ռազմավարության իրականացումը, լինեն իրատեսական առկա ռեսուրսների, կարիքների և կառավարչական կարողությունների տեսանկյունից, հստակ արտահայտվեն վերստուգման ենթակա պայմաններում[2]: Գործողությունները պետք է կապված լինեն ռազմավարական պլանի խնդիրներից մեկի հետ, ներառեն հստակ առաջադրանքներ,

[1] https://www.e-draft.am/projects/385/about

[2] Project Design Manual. A Step-by-Step Tool to Support the Development of Cooperatives and Other Forms of Self-Help Organization. 2010. p. 53
http://www.ilo.org/public/english/employment/ent/coop/africa/download/coopafricaprojectdesignmanual.pdf

որոնք պետք է իրականացվեն, սահմանեն պատասխանատու անձանց, ունենան մեկնարկի և ավարտի ամսաթիվ[3]:

Սահմանված գործողությունների տրամաբանական կառուցվածքը և կապը այլ գործողությունների հետ կարող է ապահովել նախագծով ակնկալով արդյունքի և նպատակի իրականացմանը:

Նախագծի վերլուծության արդյունքում վերհանված իրավական և կառուցվածքային խնդիրները, բացերն ու առաջարկությունները ստորև ներկայացվում են ըստ Ռազմավարության իրականացմանն ուղղված առանձին միջոցառումների և գործողությունների:

[3] Action Plan Handbook. p. 8-9. http://www.globaldisabilityrightsnow.org/tools/action-planning-tools

1. Միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայի հիման վրա վեր հանված խնդիրների ուսումնասիրություն,
2. Քրեակատարողական ոլորտի կարգավորմանն ուղղված օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումների կատարում՝ հաշվի առնելով քրեակատարողական ոլորտում ձեռնարկվող բարեփոխումները,
3. Սահմանադրական և դատաիրավական բարեփոխումների շրջանակներում քրեակատարողական ոլորտը կարգավորող իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների և լրացումների կատարում

Սույն գործողությունների համար սահմանվել է կատարման ժամկետ՝ 2018-2022թթ.: Գործողությունների համար նախատեսված չէ վերստուգելի չափանիշ, որը սահմանված է օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրում, որը կարևոր դեր է կատարում ծրագրի գնահատման և մշտադիտարկման համար: Վերստուգիչ չափանիշի առկայության դեպքում ծրագիրը ստանում է ժամկետային և կատարողական հստակություն: Նախագծում բոլոր գործողությունների համար բացակայում է վերստուգիչ չափանիշը, որը կարող է բացասական ազդել Ռազմավարության միջոցառումների իրականացման ծրագրի վրա:

Միջոցառման արդյունքը սահմանված է որպես՝ քրեակատարողական համակարգում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների պաշտպանության գործուն երաշխիքների ներդնում: Սույն արդյունքը կարիք ունի պարզաբանման և հստակեցման, որովհետև տրամաբանորեն պայմանավորված չէ միջոցառման կատարումով:

Միջոցառումը նախատեսում է օրենսդրության փոփոխություն ըստ միջազգային փորձի և քրեակատարողական ոլորտում ձեռնարկվող բարեփոխումների, որոնք պետք է հանգեցնեն օրենսդրական դաշտի բարելավմանը: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների երաշխիքները բնորոշվում են որպես պայմանների, միջոցների և մեթոդների համակարգ, որը ապահովում է յուրաքանչյուրին հավասար իրավական հնարավորություններով բացահայտելու, ձեռք բերելու և իրականացնելու իրենց իրավունքները և ազատությունները[4]: Երաշխիքները ըստ բովանդակության և

[4] Տե՛ս А. Сергеев. Теория государства и права, Учебник для юридических вузов и факультетов, под ред. проф. С.С. Алексеева. 1998, с. 241 https://www.e-reading.club/chapter.php/1566/240/Alekseev_-_Teoriya_gosudarstva_i_prava.html

գործունեության լինում են իրավա-տնտեսական, սոցիալ-իրավական, իրավա-քաղաքական և իրավական: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման և պաշտպանության վերաբերյալ դրույթների ամրագրումը օրենսդրությունում հանդես է գալիս որպես *իրավական կամ օրենսդրական երաշխիք*:

Առաջարկում ենք սահմանել վերստուգիչ չափանիշներ գործողությունների համար:

Առաջարկում ենք յուրաքանչյուր գործողության համար առանձին սահմանել կատարման ժամկետ:

Առաջարկում ենք միջոցառման արդյունքը հստակեցնել, հետևյալ կերպ շարադրելով՝ քրեակատարողական համակարգում մարդու իրավունքների և հիմնարար ազտությունների պաշտպանության օրենսդրական երաշխիքների ամրագրում:

Պատիժը կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձանց որոշումների, գործողության և անգործության դեմ ներկայացված բողոքների քննության մեխանիզմի կատարելագործում

1. Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա մշակել բողոքների քննության նոր մեխանիզմ՝ հաշվի առնելով գործող մեխանիզմի կիրառման ժամանակ առաջացած խնդիրները: Գործողության արդյունքը անազատության մեջ գտնվող անձանց իրավունքների պատշաճ պաշտպանության երաշխիքների առկայություն:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 19-րդ կետը նախատեսում է ստեղծել քրեակատարողական ծառայողների գործողությունների, անգործության կամ նրանց կողմից ընդունած ակտերի բողոքարկման մեխանիզմներ՝ ընդդատյա դատարանի, բողոքներին ներկայացվող պահանջների, բողոքարկման ժամկետների հստակ ամրագրմամբ: Սույն գործողության արդյունքը՝ լրացուցիչ երաշխիքների ստեղծումն է ազատությունից զրկված անձանց կողմից բողոքարկման հստակ ընթացակարգերի սահմանման համար:

Ստացվում է, որ Ռազմավարությունը նախատեսում է ստեղծել բողոքների քննության նոր մեխանիզմ, երբ դեռ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային

ռազմավարության 2017-2019թթ. 19-րդ կետով սահմանված նույնաբովանդակ գործողությունը չի կատարվել: Ռազմավարության և Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության 2017-2019թթ. վերոնշյալ գործողությունների կատարման պատասխանատու մարմինն է ՀՀ արդարադատության նախարարությունը:

Արդյոք նպատակահարմար է սահմանել այնպիսի մի գործողություն, որի կատարումն հիմնված է մի պայմանի վրա, որի բովանդակությունը դեռևս սահմանված չի օրենսդրությունում և իրավակիրառ պրակտիկայում: Եթե նախագծի հեղինակը նպատակ ուներ կատարելագործել քրեակատարողական ծառայողների գործողությունների, անգործության կամ նրանց կողմից ընդունած ակտերի բողոքարկման մեխանիզմները, ապա դա պետք է իրականացվի Ռազմավարությամբ սահմանված 2018-2038թթ. ընթացքում:

Առաջարկում ենք սույն գործողությունը հանել կամ համապատասխանեցնել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության 2017-2019թթ. 19-րդ կետին, սահմանելով բողոքարկման մեխանիզմների կատարելագործում 2018-2038թթ. համար:

Առաջարկում ենք սահմանել վերստուգիչ չափանիշ գործողության կատարման համար:

Քրեակատարողական հիմնարկների օպտիմալացում, արդիականացում

1. Միջազգային փորձի ուսումնասիրություն հիման վրա քրեակատարողական հիմնարկների շենքային և տեխնիկական հագեցվածության առումով կարիքների գնահատում,
2. Կարիքների գնահատման արդյունքում ֆինանսական հաշվարկների իրականացում,
3. ՀՀ քրեակատարողական հիմնարկների ենթակառուցվածքների զարգացում՝ արդյունքում քրեակատարողական հիմնարկների վերանորոգում և 2 նոր քրեակատարողական հիմնարկների կառուցում

Սույն միջոցառման երրորդ գործողության համար սահմանված է ժամկետ 2022-2038թթ. որը բավականին երկար ժամանակահատված է մշտադիտարկման և վերահսկման համար: Բացի այդ, անհասկանալի է, արդյոք վերանորոգման աշխատանքների իրականացման վերջնաժամկետը պետք է լինի 2038թ.: Անհրաժեշտ է յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկի վերանորոգման աշխատանքների համար սահմանել առանձին ժամկետներ: Ամեն մի քրեակատարողական հիմնարկի վերանորոգման աշխատանքների համար առանձին ժամկետների սահմանումը կարող է

նպաստել Ռազմավարությամբ սահմանված գործողությունների իրականացման արդյունավետությանն ու թափանցիկությանը:

Այսպիսով, առաջարկում ենք միջոցառման 3-րդ գործողությունները հստակեցնել, սահմանելով համապատասխան ժամկետներ:

Առաջարկում ենք սահմանել վերստուգիչ չափանիշներ գործողությունների համար:

Քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայության արդիականացում

1. Քրեակատարողական համակարգում երկրորդային (հիվանդանոցային) բժշկական օգնության մոդելի ընտրություն.
2. Մոդելի ընտրության հիման վրա երկրորդային (հիվանդանոցային) բժշկական օգնության և սպասարկման կարողությունների զարգացում (արդիական շենքերի հատկացում, որակյալ կադրերով և սարքավորումներով ապահովում), բժշկական անձնակազմի մասնագիտական վերապատրաստման դասընթացների մշակում և իրականացում

Դիտորդական խմբի կողմից բազմից բարձայնվել է բժշկական սպասարկման ծառայության աշխատակիցների անկախության խնդիրը: Այսպես, բժիշկը հիմնարկի պետին պետք է ներկայացնի կալանավորված անձին կամ դատապարտյալին բուժական ուղղիչ հիմնարկ կամ առողջապահական մարմինների բուժական հիմնարկ փոխադրելու, կալանավորված անձանց կամ դատապարտյալներին բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու, բժշկական կոնսիլիում, խորհրդատվություն կամ բժշկական հանձնաժողովի կողմից քննարկում անցկացնելու անհրաժեշտության վերաբերյալ տեղեկատվություն և ստանա նրա համաձայնությունը, ինչի պատճառով արձանագրվում են բժշկական օգնություն ցուցաբերելու ուշացումների և, նույնիսկ, մերժման դեպքեր: Դա կապված է նրա հետ, որ վերջնական որոշումը պատկանում է հիմնարկի պետին: Անկախության սահմանափակումը վերաբերում է նաև մարմնական վնասվածքներն արձանագրելուն և

ազատազրկված անձին պատժախուց տեղափոխելու վերաբերյալ բժշկական եզրակացություն տրամադրելուն:[5]

Բժշկական անձնակազմի մասնագիտական վերապատրաստումը կարևոր նշանակություն ունի բժշկական օգնության որակի ապահովման համար, սակայն խնդիրների համակարգային լուծման համար անհրաժեշտ է *քրեակատարողական հիմնարկներում բժիշկների անկախությունն ապահովելու համար բուժծառայությունն ընդգրկել ՀՀ առողջապահության նախարարության համակարգում: Յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկում բժշկական սպասարկման բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի ղեկավարին ընձեռել հնարավորություն ինքնուրույն որոշելու կալանավորված անձի և դատապարտյալի՝ այլ բժշկական հիմնարկ տեղափոխելու հարցը՝ կախված բժշկական անհրաժեշտությունից[6]:*

Առաջարկում ենք սահմանել վերստուգիչ չափանիշներ գործողությունների համար:

Առաջարկում ենք յուրաքանչյուր գործողության համար առանձին սահմանել կատարման ժամկետ:

Քրեակատարողական ծառայության արդիականացում, մասնագիտական ներուժի շարունակական զարգացում և արդյունավետ տեղաբաշխում

1. Քրեակատարողական համակարգում առկա կադրային քաղաքականության վերանայում, ուսումնասիրություն և կարիքների գնահատում:

Սույն միջոցառման արդյունքն է մասնագիտական համապատասխան ներուժ ունեցող կադրերի պատրաստում:

Պատճառահետևանքային կապը գործողության և արդյունքի միջև բացակայում է, որովհետև միայն ուսումնասիրության և կարիքների գնահատման արդյունքում հնարավոր չէ իրականացնել քրեակատարողական ծառայության արդիականացում: Անհրաժեշտ է կազմակերպել և իրականացնել համալիր գործողություններ կադրերի վերապատրաստման համար՝ ներառելով մասնագիտական դասընթացներ,

[5] Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2014-2015 թվականների գործունեության հաշվետվություն. 2016թ. էջ. 92 http://pmg.am/images/2014-2015_PMG_Annual_report.pdf

[6] Նույն տեղում էջ. 100

փոխանակման ծրագրեր և այլ միջոցառումներ: Ռազմավարությամբ սահմանված գործողությունները չեն հանգեցնում ակնկալվող արդյունքին, այդ իսկ պատճառով *առաջարկում ենք լրացնել գործողությունների ցանկը:*

Առաջարկում ենք սահմանել վերստուգիչ չափանիշներ գործողությունների համար:

Առաջարկում ենք յուրաքանչյուր գործողության համար առանձին սահմանել կատարման ժամկետ:

Անազատության մեջ գտնվող անձանց զբաղվածության ապահովման պայմանների ստեղծում

2. Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց զբաղվածության ապահովման վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն,
3. ՔԿՀ-ներում արտադրության կազմակերպման կարողությունների զարգացում՝ դիտարկելով նաև մասնավոր հատվածի հետ համագործակցության հնարավորությունը,
4. Քրեակատարողական օրենսդրության արդիականացում, որը կնպաստի քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց զբաղվածության ապահովմանը

Միջոցառման արդյունքն է՝ ստեղծվել են նպաստավոր պայմաններ անազատության մեջ պահվող անձանց զբաղվածության ապահովման համար:

Ռազմավարության սույն միջոցառումով վերհանված խնդիրը միշտ գտնվել է ԽԿԿ-ի պատվիրակության ուշադրության ներքո, որը վերջին անգամ արտացոլվել է Հայաստանի Հանրապետության վերաբերյալ 2015թ. զեկույցում[7]: Սահմանված գործողությունների և ակնկալվող արդյունքի պատճառահետևանքային կապը հանգեցնում է այն եզրահանգմանը, որ անազատության մեջ պահվող անձանց զբաղվածության հարցը կարգավորվելու է օրենսդրական մակարդակում: ԽԿԿ-ի պատվիրակությունը անդրադառնալով սույն խնդրին կարևորել է Հայաստանի Հանրապետության կողմից քրեակատարողական հիմնարկներում ներկայացված օրենսդրական բարեփոխումների ծրագիրը, սակայն նշել է, որ անհրաժեշտ է գործողություններ իրականացնել ազատազրկված անձանց զբաղվածության, հանգստի և

[7] Տե՛ս Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatmen or Punishment (CPT) from 5 October to 15 October 2015. CPT/inf (2016), p. 42 https://rm.coe.int/16806bf46f

այլ տեսակի գործունեություն գործնականում ապահովելու համար: Միջոցառման 3-րդ գործողությունը հստակեցման անհրաժեշտություն ունի. պետք է սահմանել այն իրավական ակտերը, որոնք ենթարկվելու են փոփոխությունների կամ մշակվելու են նոր իրվական ակտերի նախագծեր:

Անհրաժեշտ ենք գտնում գործողությունների մեջ սահմանել գործուն քայլեր, որոնք ուղղված կլինեն ազատազրկված անձանց համար հատուկ զբաղվածության կենտրոնների ստեղծման, այդ կենտրոնների մասնագետների վերապատրաստման և այլ աշխատանքների համար:

Առաջարկում ենք սահմանել վերստուգիչ չափանիշներ գործողությունների համար:

Առաջարկում ենք յուրաքանչյուր գործողության համար առանձին սահմանել կատարման ժամկետ:

Քրեակատարողական ծառայողների սոցիալական պայմանների բարելավում

1. Քրեակատարողական ծառայողների համար բնակարանային ապահովման կարիքների գնահատում
2. Համապատասխան ծրագրի մշակում և ներդնում

Միջոցառման արդյունքն է՝ ստեղծված են բավարար երաշխիքներ քրեակատարողական ծառայողների սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

Ինչպես արդեն նշվել էր առաջին միջոցառման գործողությունների վերլուծման ժամանակ, գործողությունների արդյունքում օգտագործվում է երաշխիք եզրույթը, որը տարընկալման հիմք կարող է հանդիսանալ: Այսպես, գործողության մեջ նշվում է ծրագրի մշակում և ներդնում, որը նշանակում է, որ քրեակատարողական ծառայողները գործողության իրականացման դեպքում պետք է ապահովված լինեն բնակարաններով: Եթե նախագծի հեղինակը այդպիսի նպատակ է սահմանել, ապա պետք է նախատեսել մեկ այլ գործողություն, այն է, իրավական ակտի ընդունում, որը սահմանելու է բնակարանների տրամադրման կարգն ու պայմանները: Այսպիսով, պետք է համապատասխանեցնել գործողությունները ակնկալվող արդյունքին, սահմանելով քրեակատարողական ծառայողներին բանակարանների տրամադրման թիվը նշված ժանակահատվածում:

Եթե նախագծի հեղինակը նպատակ է սահմանել միայն օրենսդրական մակարդակում ներդնել ծրագիրը, ապա պետք է սահմանել որպես գործողություն իրավական ակտի ընդունում, որը կհանգեցնի բավարար օրենսդրական երաշխիքների

ստեղծմանը քրեակատարողական ծառայողների սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

Միջացառման անվանումը ներառում է սոցիալական պայմանների բարելավում, բայց նախատեսում է միայն բնակարանների տրամադրում քրեակատարողական ծառայողներին: Առաջարկում ենք ներառել նաև աշխատավարձի բարձրացման վերաբերյալ գործողություններ և ժամկետներ:

Դիտորդական խումբը առաջարկում է փոփոխել աշխատավարձային քաղաքականության գործող պրակտիկան, մասնավորապես, քրեակատարողական հիմնարկի ծառայողի աշխատավարձի մեծությունը կարելի է որոշակիորեն պայմանավորել, օրինակ, տվյալ քրեակատարողական հիմնարկում ազատազրկվածների թվաքանակով:[8]

Առաջարկում ենք սահմանել վերստուգիչ չափանիշներ գործողությունների համար:

Առաջարկում ենք յուրաքանչյուր գործողության համար առանձին սահմանել կատարման ժամկետ:

«Քրեակատարողական գործ» մասնագիտության ուսումնառության կազմակերպում

1. «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից նախնական մասնագիտական ուսումնառության կազմակերպում
2. «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից միջին մասնագիտական ուսումնառության կազմակերպում
3. «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բարձրագույն մասնագիտական կրթության կազմակերպում

Միջոցառման արդյունքն է՝ համապատասխան մասնագիտական կարողություններ ունեցող քրեակատարողական ծառայողների պատրաստում:

Սույն գործողությունների գնահատման և մշտադիտարկման համար անհրաժեշտ է սահմանել վերստուգիչ չափանիշներ, օրինակ ուսումնական ծրագիր, հայեցակարգ:

[8] Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2014-2015 թվականների գործունեության հաշվետվություն. 2016թ. էջ. 66 http://pmg.am/images/2014-2015_PMG_Annual_report.pdf

Արդյունքի որակական գնահատման համար վերստուգիչ չափանիշները կարևոր և պարտադիր նշանակություն ունեն։

Առաջարկում ենք սահմանել վերստուգիչ չափանիշներ գործողությունների համար։

Անչափահասների գործերով արդարադատության խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացում, անչափահաս դատապարտյալների պահման պայմանների բարելավում

1. Արդարադատության խորհրդի գործունեությունն կանոնակարգող իրավական ակտի ընդունում,
2. Անչափահասների ն արդարադատության ոլորտի զարգացման ծրագրի մշակում և իրականացում
3. Միջազգային չափորոշիչների հիման վրա անչափահաս դատապարտյալների կարիքներին համապատասխանեցված ոչ բանտանման միջավայրի ստեղծում և ռեժիմային միջոցառումների իրականացում

Միջոցառման արդյունքն է անչափահասների արդարադատության ոլորտի արդյունավետության բարձրացում, իրավունքների պաշտպանություն, անչափահաս դատապարտյալների կարիքներին համապատասխանեցված պայմաններ։

Գործողություններից միայն մեկն է նախատեսում Արդարադատության խորհրդի գործունեությունն կանոնակարգող իրավական ակտի ընդունում, ընդ որում՝ արդյունքում նշվում է անչափահաս դատապարտյալների իրավունքների պաշտպանություն, *որը պետք է ապահովել քրեկատարողական համակարգում գործող իրավական ակտերով։*

Անհրաժեշտ է միջազգային իրավական կարագավորումների և անչափահասների կարիքների գնահատման համաձայն իրականացնել օրենսդրական փոփոխություններ, սահմանելով հստակ կատարաման ժամկետներ։ Գործողությունների կատարման ժամկետում առկա է վրիպում, քանզի նշված է 2019-2019թթ…։

Առաջարկում ենք սահմանել վերստուգիչ չափանիշներ գործողությունների համար։

Առաջարկում ենք յուրաքանչյուր գործողության համար առանձին սահմանել կատարման ժամկետ։

Քրեակատարողական ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված ծրագրի մշակում և իրականացում

1. Քրեակատարողական ծառայության գործունեության ռիսկային ոլորտների ուսումնասիրություն
2. Կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագրի մշակում և իրականացում

ԽԿԿ-ի պատվիրակությունը Հայաստանի Հանրապետություն այց կատարելու ժամանակ նշել էր, որ կոռուպցիան շարունակում է մնալ հայկական բանտային համակարգի հիմնախնդիրներից, և կոչ արեց Հայաստանի իշխանություններին քայլեր ձեռնարկել այդ երևույթի դեմ պայքարելու համար: ԽԿԿ-ի պատվիրակությունը մատնանշեց, որպես քայլերից մեկը՝ քրեակատարողական ծառայողների, մասնավորապես կրտսեսներ պաշտոններ զբաղացնող աշխատողների աշխատավարձերի բարձրացում[9]:

Դիտորդական խմբի կողմից իրականացվել է վերլուծություն ազատազրկված անձանց կողմից բջջային հեռախոսներ պահելու հետևանքների վերաբերյալ: Վերլուծության արդյունքում պարզվել էր, որ բջջային հեռախոսի՝ որպես արգելված իրի օգտագործումը, հանգեցնում է կոռուպցիոն ռիսկերի աճման, քանզի անհասկանալի է մնում առգրավված հեռախոսների հետագա ճակատագիրը և ինչպես են կանխվում նման ռիսկերը: Դիտորդական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է քննարկել բջջային հեռախոսների կիրառությունը քրեակատարողական հիմնարկներում թույլատրելու հնարավորությունը, ինչը կնվազեցնի քրեակատարողական հիմնարկների ծառայողների կողմից կոռուպցիոն գործարքներում ներգրավվելու հնարավորությունը:[10]

Առաջարկում ենք 2-րդ գործողության համար սահմանել ավելի երկար կատարման ժամկետ, քանզի կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար ուղղված միջոցառումները պետք է ունենան շարունակական բնույթ և կիրառվեն Ռազմավարությամբ սահմանված 2018-2038թթ. ժամանակահատվածում:

Առաջարկում ենք սահմանել վերստուգիչ չափանիշներ գործողությունների համար:

Առաջարկում ենք յուրաքանչյուր գործողության համար առանձին սահմանել կատարման ժամկետ:

---

[9] Տե՛ս Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatmen or Punishment (CPT) from 5 October to 15 October 2015. CPT/inf (2016), p. 32, https://rm.coe.int/16806bf46f

[10] Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2014-2015 թվականների գործունեության հաշվետվություն. 2016թ. էջ. 66 էջ. 69 http://pmg.am/images/2014-2015_PMG_Annual_report.pdf

1. ՔԿՀ-ների ենթակառուցվածքների հնարավորությունների ուսումնասիրում,
2. Հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ պայմանների ապահովման ծրագրի մշակում,
3. Ծրագրի հիման վրա հաշմանդամություն ունեցող անձանց համար համապատասխան պայմանների ապահովում

Միջոցառման արդյունքն է՝ քրեակատարողական հիմնարկներում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ապահովելու նախադրյալների ստեղծում:

Սույն միջոցառումը արդեն իսկ սահմանված է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի 20-րդ կետում՝ կատարել ուսումնասիրություն քրեակատարողական հիմնարկներում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր ապահովելու առաջնահերթությունների վերաբերյալ, և արդյունքներով մշակել համապատասխան գործողությունների ծրագիր: Որպես արդյունք գրանցված է հետևյալը՝ ստեղծվել են նախադրյալներ, ըստ առաջնահերթության, ազատազրկման վայրերում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների բավարարման նպատակով համապատասխան պայմաններ ապահովելու համար:

Այսպես, եթե համամեմատական անցկացնենք Ռազմավարության և Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրով սահմանված միջոցառումների միջև, ապա հանգում ենք այն եզրահանգմանը, որ երկու միջոցառումները ուղղված են քրեկատարողական հիմնարկների ենթակառուցվածքների ուսումնասիրմանը, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր ապահովելու վերաբերյալ ծրագրի մշակմանը և հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ապահովման համար համապտասխան պայմնների և նախադրյալների ստեղծմանը:

Այսպիսով, ստացվում է որ երկու ռազմավարական ծրագրերով սահմանվում է նույնաբովանդակ գործողություն կատարման տարբեր ժամկետներով:

Առաջարկում ենք հստակեցնել Ռազմավարության սույն միջոցառման գործողությունների բովանդակությունը կամ հանել, որպես արդեն իսկ Մարդու

իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրով սահմանված գործողություն:

Առաջարկում ենք սահմանել վերստուգիչ չափանիշներ գործողությունների համար:

Առաջարկում ենք յուրաքանչյուր գործողության համար առանձին սահմանել կատարման ժամկետ:

Հավելյալ միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ

Ռազմավարությամբ սահմանված միջոցառումներին կից նախագծի հեղինակի ուշադրության ենք ներկայացնում հետևյալ առաջարկությունները:

1. ՀՀ արդարադատության նախարարությունում ստեղծել խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության և խտրականության դեմ պայքարի բաժին:

ՀՀ արդարդատության նախարարությունում վերոնշյալ բաժնի ստեղծումը պայմանավորված է ազատազրկված անձանց բողոքների արագ արձագանքման, օպերատիվ լուծման և իրավիճակի վերահսկման անհրաժեշտությամբ: Սույն բաժինը կարող է հանդիսանալ ազատազրկված անձանց համար իրավունքների և հիմնարար ազատությունների լրացուցիչ պաշտպանության երաշխիք:

2. Ազատազրկված անձանց տեսակցության իրավունքի վերաբերյալ օրենսդրական փաթեթի մշակում:

Նախագծում սահմանվել է այն կարևորագույն հիմնախնդիրը, որը կապված է պատիժը կրելուց հետո բանտարկյալներին՝ հասարակության մեջ վերաինտեգրվելու հնարավորությունների և երաշխիքների տրամադրման արդյունավետ համակարգի բացակայության հետ: Նախագծում բավականին մանրամասնորեն տրվել է խնդրի վերաբեյալ հիմնավորում, սակայն բաց է թողնվել ազատազրկված անձանց տեսակցության իրավունքի ապահովման և պաշտպանության վերաբերյալ խնդիրը, որը առկա է գործող օրենսդրությունում և իրավակիրառ պրակտիկայում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և ԽԿԿ-ի պատվիրակությունը բազմիցս նշել են տեսակցությունների կարևորությունը ազատությունից զրկված անձանց

համար, որպես հասարակությունում վերինտեգրվման բաղկացուցիչ մաս, որպես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորվող իրավուքների արդյունավետ իրականացում: Երկարաժամկետ դատապարտված բանտարկյալների վրա ինստիտուցիոնալացման բացասական ազդեցության հետևանքները նվազեցնելու և բանատարկյալներին հասարակությունում վերաինտեգրման ուղղորդման համար, անհրաժեշտ է արդյունավետ պահել բանտարկյալների կապը արտաքին աշխարհի հետ[11]:

ԽԿԿ-ի պատվիրակությունը ազատազրկման վայրերի այցելությունների ժամանակ բացասական է գնահատել ցմահ և երկարաժամկետ այլ ազատազրկման դատապարտված բանտարկյալների իրավիճակը՝ կապված նյութական պայմանների, զբաղվածության, արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու հնարավորության հետ: Ցմահ և երկարաժամկետ այլ ազատազրկման դատապարտված բանտարկյալները ընթարկվում են հատուկ սահմանափակումների, որոնք հավանաբար կարող են իրենց ազդեցությամբ խորացնել վնասակար հետևանքները, որոնք բնորոշ են երկարաժամկետ կալանքին: Նման սահմանափակումների օրինակներն են՝ բաժանումը այլ բանտարկյալներից, այլ բանտարկյալների հետ հաղորդակցվելու արգելումը, սահմափակ թվով այցերի հնարավորություն: ԽԿԿ-ի պատվիրակությունը նշել է, որ նմանատիպ հատուկ սահմանափակումների հիմքում ընկած է տարբերակված մոտեցումը՝ ըստ դատավճռով սահմանված պատժատեսակի, առանց անհատական վտանգների գնահատման, որոնք բանտարկյալները կարող են կամ չեն կարող ներկայացնել[12]:

ԽԿԿ-ի պատվիրակությունը Հայաստան կատարած այցի վերաբերյալ իր զեկույցում նշել է, որ Հայաստանում գործող այն համակարգը, որի համաձայն բանտարկյալների արտաքին աշխարհի հետ հաղորդակցության աստիճանը որոշվում է դատավճռով սահմանված պատժի տեսակից և պատժի կրման ռեժիմից, սկզբունքորեն սխալ է: ԽԿԿ-ի պատվիրակության կարծիքով բոլոր բանտարկյալները անկախ պատժից և ռեժիմից, պետք է ունենան շաբաթական առնվազն մեկ ժամ տեսակցության իրավունք: Ցանկալի է, որ բանտարկյալն ունենան տեսակցություններ ամեն շաբաթ: Հնարավորություն պետք է ընձեռվի, որ բանտարկյալներն ունենան կուտակվող տեսակցությունների իրավունք այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում այցեր չեն եղել[13]:

[11] Տե՛ս Memorandum of the European Committee for Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment of 27 June 2007.CPT (2007)55

[12] Տե՛ս European Committee for Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment. Development concerning CPT standards in respect of imprisonment. Extract from the 11th General Report of the CPT, published in 2001. https://rm.coe.int/16806cd24c

[13] Տե՛ս Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatmen or Punishment (CPT) from 5 October to 15 October 2015. CPT/inf (2016) 31, p. 56-57

ԽԿԿ-ի պատվիրակության կողմից նշվել է այն փաստը, որ ցմահ դատապարված բանտարկյալների տեսակցությունների թիվը զգալիորեն ցածր է համեմատած այլ բանտարկյալների հետ, և հորդորեց ՀՀ իշխանություններին համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարել, որոնք կնախատեսեն տեսակցությունների թվի հավասար բաշխումը բոլոր դատապարտյալների միջև: Ցմահ ազատազրկման դատապարտված անձինք պետք է ունենան բաց պայմաններում կարճատև տեսակցությունների իրավունք, կարող են սահմանվել փակ տեսակցություններ՝ անվտանգության անհատական գնահատմամբ: